

կըուելու, սուր աչքով՝ դիտելու և մեծ փշողութիւնով՝ տեսածը մտքում պահելու, այլ և գրականական տաղանդով՝ չարչարանքների պատմութիւնից հետաքրքրական վէպի նման կովառուրային պատմական մի գիրք լորինելու չափ:

Ազա գիրքը, ինչպէս ասւած է թարգմանող Պ. Պ.-ի լառաջարանում, թարգմանած է հաերէն և ավմէկորած ձեռագրից ռուսերէն, գերմաներէն, անգլիերէն, և գրքի երկրորդ մասն էլ վրացերէն։ Ալդ թարգմանութիւնների մասին լրում ենք ընթերցողին Պ. Պ.-ի լառաջարանին։

Ակժմ մի քանի խօսք գրքի հայերէն թարգմանութեան մասին, թարգմանութեան լեզուն, որը ընդհանրապէս արարատուան բարբառի հարազատութեան դրում է կրում, մի քանի կողմնրից անպիսի տարօրինակութիւններ է ներկալացնում, որ մոռում է միան ազշել, Ո՞վ կարող է հասկանալ բացի գուցէ միակնիրան թարգմանչից, թէ ինչու ամե-

նամաքուր աշխարհաբառ ձևերի հետնա ամեն տեղ զրում է՝ լսին, տանին, տանջւիլ, չարչարին, մնունիլ, վրէժինդիր լինիլ, աշխատիլ և ալմուն կամ լանկարծ՝ ամեր բազմավաստակ մատենազրաց կենսազրութեամբ, և միքանի ալսպիսի ականջ ծակող խորթութիւններու Բալց մի ըան որ չափազանց անինսամ կերպով է կատարւած, զա՝ գրքի տպագրական սրբագրութիւնն է, որ ամեննեին պատիւ չի կարող բերել Հրատարակչական Ընկերութեան։ տպագրական սիմաների թիւը ալսեղ շատ շատաւելի է քան թուղարքելի է մի գրքի համար, Նաև տգեղ տպաւորութիւնն է թողնում ալ և ալ ձեմի զլսատառերի շփոթութիւնը, կարելի էր ցանկալ նաև աւելի մաքուր թուղթ, թարգմանչի ծանօթութիւնները անհրաժեշտ էին և եղածները տեղինեն, մինչև անգամ ամելորդ չէր լինիլ եթէ նոցա թիւը աւելի լինէր։

Ա. Ա.

ԼԱԼԱՑԵԱՆՅ. — Ձաւախքի բուրմոնքաւ Հրատար. Թիվ-լիսի Հրատարակչական Ընկերութեան Թիֆլիզ. 1892 թ. տպ. Արօր Նազարեանի. մեծ ութածալ, 71 երես, տառ. № 10, զինն է 25 կ.։

Մեր ժողովրդագրական գրականութիւնը մի նոր գրքով ևս հարըտացաւ, զա վշեալ «Ձաւախքի բուրմոնք» է։ Ալդ գրքի երևան գալը աչքի է ընկնում առաւել այն պատճառով, որ նորա նիւթը բոլորովին

նոր է. դա Բարձր-Հակքի, որ մինչև օրս համարեա մնացել էր անուշազիր, ժողովրդեան չափաբերական և արձակ ազօթքների, երգերի և աւանդութիւնների մի հաւաքածու է, քանի որ Ձաւախքի, ալսինքն Ախալցխավ.

ու Ախալքալաքի բնակիչները Բարձր-
Հալքից գաղթածներն են:

Դժբաղդաբար պ. Լալակեանը ոչ
մի խօսք, ոչ մի բացատրութիւն կամ
տեղեկութիւն չի տալիս ոչ այն ժո-
ղովրդի մասին, որի բանաւոր գրա-
կանութիւնը իւր աշխատութեան
նիւթ է արել¹⁾), ոչ այն աղբիւրների
մասին, որոնցից նա օգտել է՝ և ոչ,
որ ամենից զլվաւորն է, ալդ բար-
բարի առանձնալատկութիւնների
արտասանութեան և քերականական
կանոնների մասին: Զը կան նորդպէս
բաղմաթիւ օտարազգի և բարբառին
առանձնալատուկ խօսքերի և զարձ-
ածների բացատրութիւնը, որ ան-
հրաժեշտ է գրքի լեզուն հասկանա-
լու համար:

Թողնենք այն հանդամանքը, որ
հաւաքածուն ինքնըստինքնան խիստ
անկատար է և լուրջ մշակութեան է
կարօտ, պ. հաւաքողը մնանչում է
այնպիսի հասարակ, տարրական կա-
նոնների դէմ, որոնց չը գիտենալը
աններելի է ամեն մի անձի, որ պա-
րապում է ժողովրդագրութեամբ:
Պր. Լալակեանը չի պահպանել ժո-
ղովրդի արտասանութիւնը, անուշա-
դիր է թողել բարբարի շատ քերա-
կանական կանոնները, խառնել և
աղաւաղել է բառերը, լատկացնելով

նոցա անպիսի նշանակութիւն, որ
չունին իսկապէս: Պր. Լալակեանը
չը գիտէ, որ Զաւախքում կամ ան-
պիսի գաւառաբարբառներ, կամնոյն
իսկ այնպիսի ինքնուրո՞ն բարբառ-
ներով խօսող գաղթականներ, որոնց
բանաւոր գրականութիւնը նա խառ-
նել չփոթել է ջաւախքինի հետ.
Չը հասկանալ նոցա միջի ահապին
տարբերութիւնը կը նշանակէ չըմ-
բռնել հաւաքած նիւթի պատ-
մական, լեզւաբանական և ժողովրդ-
գաղթական ահապին նշանակութիւնը:
Ակսպէս Ալնօրէն մարդկան-
ցից ազատւելու ազոթքը, Ալնա
մատաէ դանկողին գե-
րեզմանոց, սիրու և երգերից
առաջին չորս տունը, «Դըռու-
նէն անցաւ թնդիրն է բ
ծուռնոց, Ալլիք տեսէք ազ-
ջկաէ կեսուրոց, «Առաւոտ գա-
րի պոկենքոց», Տան Պարերգե-
րից շատերը, Հարսանեաց
երգերից առաջին երկուսը
և ալյն և ալյն չեն պատկանում:
Ջաւախքին, ալլ կամ գաղթած եկ-
տրներն են հետները բերել և կամ
պատահբար գիտեցել է մի ջաւա-
խեցի:

«Հնտի, մնաի լաւ թէլինկօ,
«Ճառագիրտէլ լաւ թէլինկօ,
Ալբաճի Մուրատ մուրախ վրաստ,
Ակարդեցար ուր է հինատ...»

Ի՞նչ նշանակութիւն կամ պա-
րունակութիւն ունին, ինչ լեզուով
կամ բարբառով են առաջին երեք
տողերը, մենք չը կարողացանք հա-
կանալ, թէն ջաւախքի բարբառը
մեր մալունի լեզուն է, և չը կարո-

1) Կարող ենք վկանել սական, որ պ. Լալակեանը ունի ալդ մա-
սին շատ նիւթեր ժողոված, որոնք չեն հրատարակւած: Ալդ նիւթերից մի քանի հասորը մնա են լանձնւած հեղինակի կողմից, որոնք սական, որպէս հում նիւթեր, չեն կարողացել անդ գտնել «Մուրճ»ի մէջ:

Ման. Խմբ.

դացան հասկանալ ակտ բառերը ոչ
մինը ջաւախեցիներից, որոնց մենք
դիմեցինք բացատրութիւն խնդրելու
օրինակի համար համեմատեցէք և
տեսէք «Մեր թագաւորն է աջ խաչ...»
(Երես 26), որը ովհնչ առնչութիւն
չունի ջաւախքի (նոյն և Բարձր-
Հարց) բարբառի հետ. Մի քանի
տեղեր աւելի աններելի սխալներ են
արած, Ալպէս' (Երես 28)

Ակովինք ունինք սև ու կարմիր,
արեգ կթելու մէկ մասն
ընտրի բ.

Ս է բ (սեր?) ու կարագ
շատ պատրաստի բ...

Ընդգծեալ երկու տողերը ժողովրդութիւնը չեն, ալ թխովի, կեղծ ու
արհեստական, Դոքա մեր գրակա-
նական լեզով են գրած երեխ տան
պակասը լրացնելու համար, Նոյնը
պէտք է ասել նաև (Եր. 36) «Պիւ-
պիւլ ինչ ես պառկէ չոխուռ օւա-
լում—երդի առաջին տան մասին,
որը թարգմանած է թուրքերէնից
կէս գրականական և կէս ջաւախքի
բարբառով.

Գալով բուն նիւթին, որտեղ ան-
թիւ տպագրական սխալներ կան
ամեն մի երեսում և այն որ ուշա-
դրութեան չէ առնւած և մատնա-
նիշ չէ արւած բառերի արտասանու-
թիւնը, ալ և աղաւաղւած և շփոթ-
ւած են թէ ուղղագրութիւնը և թէ
բառերը. Զէ որ հարկատր է նախ
գրել աճնպէս, որպէս արտասանում
է ժողովուրդը և երկրորդ, եթէ մեր
ունեցած տառերը բաւական չեն
բարբառի բոլոր ձաները արտա-
բերելու, այն ժամանակ տառերի
վերակ դրող սովորական փշիկնե-

րով կամ նշաններով աշխատում են
պակաս ձաները լրացնել¹⁾, Ան-
տարակուս կարդացած կը լինիք պ.
Գ. Խալաթեանի «Հակ ազգագրութեան
ծրագիրը», Ժողովուրդը ասումէ. զլոխ,
գրած է զլուխ և զլոխ, ասում են
էրկինք, Մալրամ, գրած է էրկինք,
Մարիամն Մալրամ Խասուրը, գրած է
Յիսուս, սուխ կամ սուրբի, զրած է
սուրբ, իմբ կամ բն, գրած է բեր. ա-
սում են Վէրուսաղնմ, կամ Վէրուսա-
ղէմ Վէրուսաղէմ,—գրած է նըրուսաղէմ,
Հարկատր էր գրել քուքար, Սար-
քիս, աշկերտ, աչք, Ալթամ, մարթ,
Կիրակոս, Քրիստոն, Գիրքոր, գրած
է Սարգիս, աշկերտ, և ալն ինչպէս
ընդունւած է զրականութեան մէջ,
Գրում է քառասուն (պիտի լինի
քառոսուն), նէսաֆաս (նաֆաս), վէվ
(վեւ), պութաղ (պուտաղ), թագոր
(թագուր), շաղէ (շաղուէ), խազնա-
տար (խազնամտար), ճամփինէր (ճամ-
փըններ), գալաւակ (գըլաւա), աննը-
ման (անլըման), պաքմազ (պաքմազ)
թանք (թանկ), չը գտնեմ (չը գտնիմ),
կամուրջ (կարմունջ), ականջ (ան-
կաճ), մէջ (մէջ), զարկէ (զարնէ)
իշտէք (իշտէկ), ըռանջդար (ըռանջ-
պար), բարձած (բառցած), դառէ,
զարձած (զառցէ, զառցած), իջեց-
րին (իջեցուցին), Ասոնք, խոննք, ի-
նոնք, մերոնք, ձերոնք (ձարկաւոր է
ասոնք, խոնք, ինոնք, մերոնք, ձե-
րոնք)... Մենք սխալների երեսները
մատնանիշ՝ չարինք, որովհեսկ իւ-

¹⁾ Ստորև բերած օրինակներում
շեշտի (Շ) նշան ենք զնում այն տա-
ռերի վերակ, որոնք դրականականից
տարբեր կերպով են արտասանում,

բաքանչիւր երեսում տասնեակներով | Լալալեանի գրած և նորա դիմացը
ալղպիսի սխալներ կան, օրինակ ժողովրդի արտասանածը.
մնաք կը բերենք մի հատւած պարոն

ՏՊԱՆ Է (Երև 1)

«Թաղակ հացի Փուտ էկաւ,
սլէք աշեցէք վով էկաւ,
սիրէք, իրէք պոզ ձիաւոր,
սիրէքն ա կանանչ կապաւոր.
«Մէկը Յիսուս, մէկը Քրիստոս,
«Մէկը մանուկ՝ սուրբ Կիրակոս,
«Եկաւ սարով իջաւ ձորով,
Հրեշտակին դէմը բարով...

Արձակ զրաւածներից աւելորդ եմ
համարում մի նմուշ դնել թէն այն-
տեղ ևս անթիւ սխալներ կան,
Մեր կանծիքով ալս հաւաքածուն
իւր ներկաւ ուղղագրութեամբ համա-
րնես անսէտք է ուսումնասիրութեան
համար, քանի որ բարբառի բազմա-
թիւ հնչիւնները կորուած են նորա
մէջ և փոխարինուած խորթ և ան-
հարազատ հնչիւններով. Ալս բար-
բառը ունի բացի սովորական «առ»-ից
և մի ուրիշ (առ)-փափուկ (որպէս
Փրանսերէն լամասնիկում), որպէս նա
հնչումէ բառերումս պահմազ, Ախր-
քամլկ, Արգներում, Բացի «ոռ»-ից և
մի փափուկ (առ) (ճիշտ համապատաս-
խան Փրանսիական «Առ»-ին), որպէս
բառում Ա՛րգներում, Մինչդեռ ևեռն
և սուն դրականական բառերի մէջ
հնչում են որպէս պարզ «Ա» և «Ո», ալս
բարբառի բառերում, երբ շեշտը ալդ
տառերի վերալ է, հնչում են «եռ»-ն
ինչպէս վե, իսկ «սուն» որպէս
մակարդւած «սու» ինչպէս հոր, ձոր,
փոր, սօխ, սխտոր, կիստոր, մերժք,
ասոնք, ատոնք, և ալն բառերում.
ևեռն տես բառերում՝ ընթ, փե,

ՊԵՐ ԱՅՆ

Թաղակ հացի ֆուտ (կամհնուտ) էկաւ,
կլէք աշեցէք վով (կամ վեւ) էկաւ,
իրեք, իրեք պոզ ձիաւոր.
իրեքն ա կանանչ կապաւոր
Մէկը յասուս, մէկը Քրիստոս,
Մէկը մանուկ՝ սուրբ Կիրակոս...
Եկաւ (էկան) սարով, իջան ձորով,
Հըրըշտըկին դէմը բարով...

կեր, փես, եղներ, կովեր, հարսներ,
աներ, հողեմ, թաղեմ, փոխեմ, և
ալն. Զաւախքի բարբառը չունի
լիակար բ, գ, դ, ջ, և ձ, ալ դոցա
փոխանակ բ-ի և պ-ի միջին ձաւնը
բ-ի տեղ է գործածւում, երբեմն բ-ն
դառնում է պ և փ, (պարի, սուրբ,
փեր—փոխանակ—բարի, սուրբ և
բեր), գ-ի տեղ գործ է ածւում թուզ
է, որ երբեմն դառնում է ակո, և «ք»
(գիւղերից մի քանիսում ասում են
կարի, փոխ. գարի, ք'ուքամ՝ փոխ.
կ'ուգամ), «Դո» ի տեղ թուզ որ որ
երբեմն դառնում է առ և «թո»: «Ձո՞ն
դարձել է փափուկ Ս երբեմն նաև
սճո, և «չո», (անկած, մէջ), «ձո՞ն դար-
ձել է թուզ Յ, երբեմն նա հնչում է
որպէս «ցո» և «ժո»... Մեր մասնանիշ
արած բարբառի նրբութիւններից
մի քանիսը միան (լինչպէս անէա-
խուգում) պահպանել է պ. հաւա-
քողը, իսկ ամենամեծ մասը ոչ միան
չեն պահպանւած, ալ և ոչ մի տեղ
ուշաղրութեան էլ չեն առնւած.
Կնքում ենք մեր խօսքը, լավոնե-
լով մեր համեստ կարծիքը, որ ալդ
գիրքը կարօտ է նոր, կանոնաւոր և

ուղիղ տպագրութեան, տեղ-տեղ նաև | Ալլապէս ալդ ժողովածուն շատ թիւ-
խմբագրութեան, ալսինքն դէն գցե-| րիմացութիւնների տեղիք կը տար,
լով Զաւախքին ոչ լատովկ երգերը: | Գը. Վանցեաց,

Նոր ստացւած գրքեր

- 1) Չորսանեան, Արշակ.—Թուղթի փառք. հոգեբանական վիպակր. Կ. Պոլիս, տպ. Թ. Սանձագմեան, 1892 թ., գինն է 5 զուրուց:
- 2) Նոյնը.—Թրթուռմներ (ոտնաւորներ). Կ. Պոլիս, տպ. Ն. Ճ. Արամեան, 1892 թ., գինն է?
- 3) Նոյնը. - Գթութիւն. Քերթւած, Կ. Պոլիս, տպ. Գ. Պաղտատ-
լեան, 1892 թ., գինն է?
- 4) Հաշիւ Ա. Պետերբուրգի հայոց եկեղեցական ստացւածքների
կառավարութեան ընդ. տնօրինութեամբ խորհրդի 1891 տարում. (Նոյնը
ոռաերէն), Ա. Պետերբուրգ, տպ. Ի. Ն. Սկորոխոդովի, 1892 թ.. Այդ
«Հաշիւն» իրը լաւելած:
- 5) Մամնագիտական համարատութիւն շինութեան, վերանորոգու-
թեան և մակաշինութեան Ա. Պետերբ. հայ. եկեղեցիների տան մէկ մասի
(Նոյնը և ոռաերէն). Ա. Պետերբ., տպ. Սկորոխոդովի, 1892 թ..
- 6) Լ. Հ. — Թաթախման գիշերը. Շուշի, տպ. հայ. Տիգրան, գինն
է 7 կոպէկ:
- 7) Փառնակէս. — «200,000». կատակերգութիւն մէկ արարածով.
1892 թ., Երևան, տպ. Լ. Տէր. Տէրիգորեանցի, գինն է 30 կոպէկ.
- 8) Հեղինակ?—Երկրի և երկնքի մասին զրուցներ. թարգմ. ոռո-
սերէնից. Հրատ. Օդեսակի համալսար. հայ ուսանողների. 1892 թ., Մոսկ-
ա, տպ. Ա. Բարիսուդարեանի. գինն է 20 կոպէկ.
- 9) Զարգարեանց, Մ., թժ. — «Խոլերավի մասին» (արտատպւած
1892 թ. Արարատ ամսագրից). Վաղարշապատ, տպ. Մալթոսի,
1892 թ., ձրի:
- 10) Արձրունի, Վ., Բժ. — «Խոլերավի մասին»; Արտատպւած «Մշակ»
Մագրից. Վաղարշապատ, տպ. Ա. Էջմիածնի բաժանում է ձրի: